ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հուլիսի 2012 թվականի թիվ 20-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16- րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Օտարել համայնքային սեփականություն համարվող, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց 58 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված 0.12 հա մակերեսով, քաղաք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց 11/1 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված 0.07 հա մակերեսով, քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց 5-րդ փակուղի 4 հաս ցեում գտնվող, բնակավայրերի, հասարակական կառուցապատման համար նախատեսված 0.05 հա մակերեսով, քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց 18 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված 0.04 հա մակերեսով, քաղաք Ծաղկաձոր, Իսահակյան փակուղի 12 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված 0.1 հա մակերեսով, և քաղաք Ծաղկաձոր, Իսահակյան փակուղի 14 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված 0.14 հա մակերեսով և քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց 56 հասցեում գտնվող, բնակավայրերի, այլ նշանակություն ունեցող 0.08 հա մակերեսով հողամասերը աճուրդային կարգով:
2. Հողամասերի մեկնարկային գները սահմանել դրանց կադաստրային արժեքի հարյուր տոկոսի չափով:

Ավագանու անդամներ՝

Հ. Ասատրյան
Ս. Մանուկյան
Գ. Հայրապետյան
Կ. Առաքելյան
Գ. Կարապետյան
Դ. Առաքելյան
Ա. Սողոմոնյան

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԳԱՐՈՒՆ ՄԻՐԶՈՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է